ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2016թ. թիվ 291-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 257-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 13.09.2016թ. թիվ 249 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. օգոստոսի 8-ի «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 257-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. «Վնասվածքաբանական վիրաբուժական ծառայություններ» բաժնի «Հավելյալ մատուցվող ծառայություններ» ենթաբաժինը 19-րդ տողից հետո լրացնել նոր տողերով՝ համաձայն հավելված 1-ի:

2. «Թերապևտիկ ծառայություններ» բաժնի 7-րդ տողում «Շաքարային դիաբետ» բառերը փոխարինել «Էնդոկրին հիվանդություններ» բառերով:

3. «Թերապևտիկ ծառայություններ» բաժնի «Արտահիվանդանոցային վճարովի բժշկական օգնություն և սպասարկում» ենթաբաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. սեպտեմբերի 16
ք.Վանաձոր